

ԼՈՒՄԻԿ ԱՎԱԳՅԱՆ

ԹԱՎՐԻՋՈՒՄ ԳՐՎԱԾ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐ

Ատրպատական, Ագրպատկան, Ագրպայկան երկիրը, ուր գտնվում է Թավրիզը, սամսկրիտերեն և հին պարսկերեն նշանակում է տեղ հուր կամ կրակ պահող: Հնագույն շրջան է Պարսկաստանում, Կասպից ծովի և Ուրմիա լճի (Կասպուսան ծով) միջև: Հյուսիս-արևմտյան և մասամբ էլ հյուսիսային կողմից անմիջապես և երկար տարածությամբ սահմանակից լինելով Հայաստանին՝ իր հարաբերություններն այս վերջինին հետ սկսվել են ամենահին ժամանակներից:

Թավրիզ կամ Թարվեզ՝ ըստ արդի հասարակ գործածության, Թաքրիզ՝ ըստ պարսիկների, որ նշանակում է տապ, ջերմ թափող:

Ըստ աղբյուրների, Թաքրիզը հիմնադրվել է արաբական խալիֆ Հարուն ալ Ռաշիդ ամիրապետի (786-809 թթ.) Ջուքեյդա կնոջ կողմից, որն Ատրպատականում ճամփորդելու ժամանակ ջերմել է և կանգ առել մի աղբյուրի մոտ: Այստեղի օդը և ջուրը շատ առողջարար և լավը գտնելով՝ մի քանի օր մնալուց հետո բոլորովին առողջանում է: Ամիջապես իջևանած տեղում քաղաք է կառուցել տալիս և անվանում Թաքրիզ, այսինքն՝ ջերմաթափ¹: Ոմանք էլ այս քաղաքը նույնացնում են Պըտղոմեոսի հիշատակած Գաբրիս կամ Տաբրիս քաղաքի հետ: Մեկ այլ ավանդություն Թավրիզի հիմնադրումը վերագրում է Հայոց Խոսրով Ա թագավորին, որն, իբր, պարսության մատնելով Սասանյան Արտաշիրին, որպես վրեժխնդրություն Արտավազդ Արշակունուն սպանելու համար, ասում է, «դա ի վրեժ», այսինքն՝ Դավրեժ²: Ոմանք էլ Թավրիզը նույնացնում են Ատրպատականի հնամենի մայրաքաղաք Գանձակ Ծափաստանին: Հայկական աղբյուրներում Թավրիզը հիշատակվում է նաև շատ գողտրիկ մի անունով՝ Ոսկեքարիկ:

Գտնվելով աշխարհագրական բոլոր ուղղություններով եկող-գնացող առևտրական կարևորագույն ճանապարհների հանգուցակետում, Թավրիզը, հատկապես միջին դարերում, բազմամարդ և վաճառաշահ քաղաք էր: Այստեղ պարսիկներից և աղբյուրներից բացի, հնուց ի վեր ապրում են հայեր, քրդեր, ասորիներ և այլք:

Արդի Թավրիզը գտնվում է Էլնալ-Ջեյնալ լեռների հարավ-արևմտյան կողմում: Քաղաքը բաժանված է ութ մեծ թաղերի: Հայերը Թավրիզում հիմնականում ապ-

¹ Սակայն այս հայտնի մի սխալ է, քանի որ Թավրիզը Ջուքեյդայից առաջ արդեն մի երևելի քաղաք էր:

² Տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Երևան, 1988, հատ 2, էջ 417:

րում են երկու թաղերում՝ Ներքին կամ Ս. Աստվածամայր եկեղեցու թաղ, որը Թավրիզում ավելի հայտնի է «Ղալա»³ անունով, և երկրորդ՝ Դրսի կամ Լիլավայի թաղ: Երկու թաղերում էլ գործում էին և այժմ էլ կան հայկական եկեղեցիներ, տղաների և աղջիկների դպրոցներ⁴ իրենց գրադարաններով և ինքնագործ խմբերով: 1890 թը՝ վականին այստեղ հիմնադրվել է տպարան: Թավրիզում է մտնում Աստրախական Հայոց եկեղեցու առանցքորդը՝ արքեպիսկոպոսը:

Թավրիզի հայերը մեծ մասամբ դարադաղացիներ են, որոնք գաղթելով Փայտակարանի գյուղերից, եկել և հաստատվել են այս քաղաքում: Հայ բնակիչների մեջ կան մահ Պարսկաստանի մյուս նահանգներից և օտար երկրներից հաստատվողներ: Բուն թավրիզեցի հայերն այժմ ժողովրդի ամենափոքր մասն են կազմում և խոսում են Արարատյան բարբառի մի խոսվածքով:

Այս քաղաքն ի սկզբանե ճանաչվել է Պարսկաստանի ամենավաճառաշահ քաղաքներից մեկը և իր ընդարձակ վաճառականության շնորհիվ է միայն, որ կարողացել է բազմաթիվ աղետներից հետո վեր ելնել ու ծաղկել: Եվրոպացի ճանապարհորդները զարմանքով են հիշատակում Թավրիզի շուկաներն ու արհեստանոցները, որոնցում կարելի էր գտնել բառացիորեն ամեն ինչ: Ծարդենը, օրինակ, Թավրիզում հիշատակում է 15000 խանութ ու կրպակ, 30 իջևանատուն, 250 մզկիթ: Վերջիններից մի քանիսը նախկինում քրիստոնեական եկեղեցիներ են եղել (Ս. Հովհաննես Մկրտիչ, հայկական մենաստան և այլն):

Թավրիզի Սուրբ Աստվածամայր եկեղեցին, որ այժմ ամենից մեծն է, կառուցված է անտաշ քարից ու կրից: Այս եկեղեցու տեղն առաջ ուրիշն է եղել: Այս փաստը հաստատում է թե՛ ավանդույթը, և թե՛ արդի եկեղեցու գլխավոր դռան աջ կողմի պատի մեջ դրված մարմարե հիշատակարանը:

Ղուկաս Կաթողիկոսն իր կոնդակում տեղեկացնում է. «Լևեալ էք ահա, թե որպես ահագին, մեծ եւ երկարաձիգ շարժմամբ զմեծագոյն աներութիւնս եւ զվնասս կրեաց քաղաքն Թաւրէզ: Եւ յայնմ շարժմանէ խղճուկ եւ սակաւոր ժողովուրդքն մեր եւ որք գոն անդ, ոչ սակաւ վնասուց են դիպեալք: Որք, թող զմարմնատուրս վնասակարութեան, կրեալ են եւս զհոգեւոր վնասս մեծագոյնս: Վասն զի Ս. եկեղեցին մոցա, գեղեցկաշեն եւ չքնաղազարդս ի նոյն ահագին շարժմանէն, փլեալ է ի հիմանէ»: Կոնդակի վերջում գրված է. «Գրեցաւ զիրս Օրջաբերական ի ՌՄԼԱ, (1782) թուջս մերում»:

Լիլավա թաղի եկեղեցին, որ կոչվում է Ս. Սարգսի անունով, կառուցվել է 1845 թ., նույնպես նախկինում ավերված եկեղեցու վայրում, Տեր Զաքարյանի աշխատությամբ և հայ ժողովրդի դրամական օժանդակությամբ:

³ Ղալա - հայերեն թարգմանությամբ՝ քերդ: Հայերը կոչում էին մահ «Բերդաթաղ»:

⁴ Այս գույց դպրոցները հայտնի են եղել Հայկազյան և Թամարյան անուններով:

Թավրիզի մերձակա գյուղերում՝ Ստորին և Վերին Դարաշամբում⁵ է գտնվում Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքը, որը սրբատաշ քարերով միակամար գեղեցիկ շենք է։ Հիշատակարաններում ասված է, որ այս վանքը կառուցվել է 17-րդ դարում «... նախկին հիմնաց վերայ...»⁶։ Եկեղեցու զմբեթը շատ բարձր է և ավելի զլանաձև, քան բրգաձև, որի վրա քանդակված են 12 առաքյալների և Ս. Գրիգոր Լուսավորչի պատկերները։ «Եկեղեցին,- պատմում է ականատես Ն. Գորոյանցը,- շատ զարդ ու սպաս չունի, քանի մը տասնեակ գրքեր կային, որոնցմէ ոմանք ձեռագիր եւ մագաղաթի վերայ էին։ Որ ինչ կրցայ տեսնել, ամէնքն ալ կը բաղկանային Աւետարաններէ, Մաշտոցներէ եւ եկեղեցական ուրիշ գրքերէ։ Ըստ վանահօր ասութեան՝ քանի մը տարի առաջ կաթողիկոսի հրամանով արժէք ու յարգ ունեցող բոլոր իրերն էջմիածին փոխադրեր էին, վանքին անապահովութիւնը պատճառ բերելով»⁷։

Թավրիզն ու շրջակայքը ընդհանրապէս հարուստ են կանգուն կամ ավերված բազմաթիվ հնություններով, ճարտարապետական կառույցներով, քարավանատներով, պալատներով։ Կանգուն մնացած հին շինությունների մեջ ամենից երևելիմ Ալիշահի միջնաբերդն է (կառուցվել է 1300 թ.), ավերակ մնացածների մեջ՝ «Գէոյ մեչիդ» կոչված մզկիթը։ Թավրիզի մոտ՝ լեռան ստորոտին են գտնվում մարերի թագավորների գերեզմանները, որոնցից մշահավորը Ժամդադանն է։ Ըստ ավանդության, այստեղ է թաղված մոնղոլական Ղազան խանի որդին՝ Արդունը (14-րդ դ.)։

Թավրիզի հայերը հիմնականում զբաղվում են առևտրով և արհեստներով։ Արդեն 16-րդ դարի սկզբներին Թավրիզն ամբողջ Պարսկաստանի գլխավոր վաճառատեղին էր։ Երկրի բոլոր կողմերից վաճառականները սկսեցին հաստատվել այստեղ։ Սրանց մեջ կարևոր տեղ էին զբաղում Թուրքիայի և մասնավորապէս Կարիմի հայերը, Ռուսաստանի հետ առևտրական կապերի գլխավոր գործող անձինք եղան նախ տիփսիսեցի, ապա շուշեցի հայերը։ Թավրիզի հայերը ոչ միայն առաջադեմ են եղել նաև արհեստների մեջ։ Սեֆյան տերության ամբողջ ժամանակ հմուտ արհեստավորներն ընդհանրապէս հայերն էին։ Հայ ոսկերիչները, դերձակները, հյուանները և այլ արհեստավորներ միշտ գերազանցել են տեղացի բնակիչներին։

Պարսկաստանի հայ գաղթօջախներում գրչության բավականին զարգացած օջախներ են եղել։ Գրվել, ընթերցանակվել, մանրանկարվել, փրկվել, փրկագմվել, մորոգվել են բազմաթիվ և բազմաբնույթ ձեռագրեր։ Դրանք բացառիկ արժեք են ներկայացնում, որովհետև գրված են ականատես և ականջալուր հեղինակների կողմից և, բնականաբար, շատ ճշմարիտ տեղեկություններ են հաղորդում։ Այդ ձեռագրերում գրիչների գրառումներ են՝ իրենց վիճակի և իրենց շուրջը տեղի ունեցող իրադարձությունների մասին։ «Ձեռագիրն իր բովանդակությունը ապագա սերունդներին փոխանցելիս ինքը ևս ներկայանում է որպէս որոշակի ժամանակի գրչության

⁵ Այս գյուղերը, հավանաբար, իրենց անունները ստացել են իրենց եղեգմուտ վայրերից։

⁶ Ն. Գորոյանց, Պարսկաստանի հայերը։ Թեհրան, 1968, էջ 159։

⁷ Նույն տեղում, էջ 159։

հուշարձան, սեփական գրով, գրանցությով, գրչության արվեստով և հիշատակարանով»⁸։ Ձեռագիր գրել՝ նշանակում է պատմություն գրել։ Ձեռագիր գրողը՝ գրիչը, պատվիրատուն՝ գրել տվողը «... ազգի, հավատի, լեզվի, գրի պաշտպաններն էին և արժանի էին փառաբանության և հիշատակ ունենալու։ Եվ հիշատակարանները փառաբանում էին նրանց»⁹։

Մեարդայան սուրբ գրերի շնորհիվ, որոնք շուրջ էին առնում մեր մախնիների կողմից գրված ձեռագրերում, մեզ են հասել հայերեն բազմաթիվ երկեր՝ կրոնական, փիլիսոփայական, գեղարվեստական, աստվածաբանական, աշխարհագրական, իրավաբանական բնույթների։ Լինելով ժամանակի ականատես վկաներ, մեր պատմիչների տեսադաշտից չեն վրիպել ժամանակակից կյանքի ոչ մի երևույթ։ Լինի դա հիվանդությունն թե թանկություն, սով թե գերեվարություն։ Գրիչները ժողովրդի հետ կիսել են իրենց ճակատագիրը։

Հիշատակարանները «...ձեռագրերի անկապտելի մասն են և տվյալ ձեռագրի ստեղծման վավերացումը...»¹⁰։ Հիշատակարանը ձեռագրի պատմությունն է։ Այն ավետում է ձեռագրի ավարտը։

Թավրիզում հայերեն ձեռագրեր գրելու մասին հնագույն վկայությունը պահպանվել է Մատենադարանի մի պատառիկի վրա, գրված 1230 թվականին, և վերաբերվում է ձեռագրի փրկագմանը։ Փրկողի անունը չի պահպանվել։ Միայն հիշում է, որ ձեռագիրը փրկել է անհավատներից և վերադարձրել իր մախնին տեղը, որ Թավրիզի Ս. Աստվածածին եկեղեցին էր։

Հաջորդ հիշատակագրությունը դարձյալ ձեռագրի փրկությանն է վերաբերում, այս անգամ գրված դարավերջին. «Ես՝ Նասրեդինս, Օիրին սարկաւազի որդիս թավրիզեցի, տեսայ զԸնթերցուածս ի ձեռն այլազգեաց, եւ առի ու տվի յեկեղեցին»։ Ինչպես տեսնում ենք, Նասրեդինն էլ գնել ու վերադարձրել է իր մախնին տեղը՝ Թավրիզի Ս. Աստվածածին եկեղեցի։ Կան նաև հետագա հիշատակագրություններ։

Հաջորդ վկայությունն արդեն 1334 թվականից է։ Մատենադարանի № 78 ձեռագիրը Պողոս առաքյալի թղթերն են, որ Սարգիս սարկավազը գրել է «ի մայրաքաղաքս Թաւրէժ, որ կոչի «Վրէժ ընդ հայք եւ ընդ պարսիկք», ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի»։ Ստացողն է Հովհաննէսը։ Ձեռագիրը գրելուց տասը տարի հետո Գրիգոր վարդապետը սրբագրում է այն և այդ մասին հիշատակություն թողնում։ Սարգիս գրչին մենք հանդիպում ենք նաև «... ի թուականութեան Հայոց տումարի 22Ա, (1342), «այս անգամ Ավետարան գրելիս, որի ստացողները՝ Հունար խաթունը և Սիոնը, «նուէր ընծայեցան Սուրբ Սարգսի՝ Թաւրիժոյ եկեղեցոյ»։ Ավետարանն այժմ պահվում է Կարինի եկեղեցում։

⁸ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դար, աշխատասիրությամբ Ա. Ա. Մաթևոսյանի, Երևան, 1988, էջ Ե։

⁹ Նույն տեղում, էջ Զ։

¹⁰ Նույն տեղում, էջ Զ։

Մեզ հայտնի է գրիչ Հովհաննես Տարբերունու երգ-ոտնավորը, որը մա գրել է իր հոգևոր եղբայր Ասլանի և Թավրիզի այլ քրիստոնյաների խնդրանքով: Սույն ոտնավոր-հիշատակարանի գրության ժամանակը հայտնի չէ: Ձեռագիրը, որից քաղված է այն, 1335 թվականից է: Հաջորդ վկայությունը մի ձեռագիր Ավետարանի մասին 1336 թվականից է. «... տիեզերահրաւեր, կեանաբեր Սուրբ Աւետարանը, կարդում ենք հիշատակարանում, - գրվել է ի թուականութեան Հայոց 22Ե (1336)», ի հիշատակ բարեպաշտ քրիստոնյաներ Սարգսի և իր կնոջ: Այս մույն թվականին գրիչ Թուման գրել է մեկ Ավետարան ևս, որի ստացողն է Նագիսաթունը: Ավետարանը զարդարված է տերունական մանրանկարներով:

Հայ միջնադարյան արվեստի մշակավոր ներկայացուցիչ Ավագը «... յաշխարհն Ատորպական, յարքայանիստ քաղաքն Սուլտանիայ եւ Թաւրեժ, ընդ հովանեաւ սրբոյ մօրն լուստ եւ Սրբոյն Սարգսի զարավարի ... ի թուաբանութեան ամի մարդեղութեան Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Բրիստոսի ի Ռ եւ ԳԺ եւ Խ (1340) ամս եւ ի գրոյս թուտ 22Զ (1337)» գրում, ծաղկում և նկարազարդում է մի Ավետարան: Պատվիրատուն պարոն Պեշգեն է: Նույն թվականին գրիչն ավարտում է մահ մի ժառանգիր:

1345 թ. Ներսեսը գրում է դավանաբանական նյութերի մի ժողովածու: Ձեռագրի էջերում կա Տոնացույց-ցանկ, որը սկսվում է 1345 թ. և ավարտվում 1361 թվականով: Պատվիրատուն Նորոգեն է: Ձեռագիրը «... գրեցաւ եւ կատարեցաւ ընդ հովանեաւ Ջորավարիս Բրիստոսի Սուրբ Սարգսի ի մայրաքաղաքս Դաւրեժ, ընդ Հայս եւ ընդ Փարսիս»: Գրիչ Ներսես երեցը ձևապիլը մվիրաբնակ է եկեղեցում:

16 տարի անց, «... ի թուաբանութեանս Հայոց ՊԻԶ (1377)», մույն գրչին՝ Ներսես երեցին նորից ենք հանդիպում Գրիգոր Նարեկացու աստվածախոս մատենի՝ «Մատենան ողբերգութեան» երկն ընդօրինակելիս, որը բովանդակում է մահ Ս. Աստվածածնին և Ս. Խաչին մվիրված ներբողները: Հիշատակարանում գրիչը ներողություն է խնդրում «գրի խոշորութեան» համար՝ պատճառաբանելով իր տկարությունը: Պատվիրատուներն են եղել Ղազար կրոնավորը, Տեր Հովհաննեսը և Արդուն տիկինը: 1394 թ. Թավրիզում Գրիգոր գրիչը ընդօրինակում է Գ. Տաթևացու քարոզները, խրատներ, առակներ, հարցմունքներ և այլ նյութերի ժողովածուն:

Հաջորդ վկայությունն արդեն ԺԵ դարից է: Դա 1401 թ. գրված մի Աստվածաշունչ է: Ձեռագրի գրիչն ու կազմողը Հովհաննես Ապարանեցին է: Հետաքրքրական է, որ այս ձեռագիրը պարունակում է մահ Մարկոսի Ավետարանը՝ գրված հայատառ պարսկերենով: Պատվիրատուն է Խաչատուր քահանան:

«... ի թուին Հայոց ՊԼԵ (1426)» գրիչ Գրիգորի ձեռամբ գրվել է մեկ այլ ձեռագիր-ժողովածու. «ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի տաճարին»: Փոքր-ինչ գրելուց հետո գրիչը «եկեալ ի ոտս Սուրբ Առաքելոյն Թադէոսի» ավարտել է: Այս ձեռագիրն այժմ պահված է Երուսաղեմում: Մի Ավետարան է գրվել 1444 թ. և պահվել Թավրիզի Բերդաթաղի Ս. Աստվածածին եկեղեցում: Գրիչը՝ Աբրահամ եպիսկոպոս Մարցին է:

Մյուս վկայությունը 1497 թվականից է և վերաբերում է ձեռագիր նորոգելուն: Տիրավագը՝ նորոգողը, «... ի ժամանակին որ է մաս-խան եկն Թավրեզ», նորոգել է այս Սուրբ Ավետարանը, որը «յոյժ հնացեալ էր»: Մեկ այլ Ավետարան գրվել է երեք տարի անց, 1500 թվականին, խաբիբ խաթունի պատվերով, որի մասին գրիչ Հակոբը թողել է հիշատակարան այն մասին, որ այն ճոխ զարդարված մի Ավետարան է, տերունական մանրանկարներով, մագաղաթե պահպանակով, կազմի մետաղյա անկյունազարդերով և արծաթյա վեց խաչով, որից երկուսն ակնակոտ են:

Մի ամբողջ հարյուրամյակ անց հանդիպում ենք մի Ծարակնոցի, գրված 1604 թվականին: Գրիչն է Վարդան եպիսկոպոսը: Ձեռագիրը մանրանկարված է, իսկ «... ի թվականին Հայոց ՌՀԸ (1629)», գրիչ Զաքարիա էջմիածնեցու ձեռամբ գրվում է մի Ավետարան:

Մատենադարանի № 7104 ձեռագիր ժողովածուի գրիչը, ստացողը, գրության վայրն ու թվականը անհայտ են: Հիշատակարանում գրիչը փառաբանում է Տիրոջը, որն «այնպես առաջնորդեաց, զի սկիզբն եղև շինելոյ Թաւրեզու եկեղեցոյն», և խնդրում է, որ «Տէր Յիսուս Քրիստոյս յաւարտ հանէ եւ անշարժ պահէ եւ արքայութիւն պարգևէ աշխատողներէ»: Խոջա Ադամը «ի թուին ՌԺ (1651) առ Թաւրեզ քաղաք գնաց ու Սուրբ Աւետարանս այլազգեաց» կազմել տալիս:

Այս թվականից հետո նորից մեծ ընդմիջում ունենք մինչև 1839 թվականը, երբ Թավրիզում գրիչ և ստացող Մկրտիչ Անդրեասյան Երևանցին գրել է երկու ձեռագիր. Հովհաննես Դրասխանակերտցու «Հայոց պատմությունը» և Մովսես Կաղանկատվացու «Աղվանից պատմությունը»: Այս նույն պատմություններին անդրադարձել են նաև այլ գրիչներ՝ Դանիել Մելքոնյանը և Հովսեփ Տեր-Հովհաննիսյանը: Վերջինիս կրկին հանդիպում ենք 1848 թվականին: Այս անգամ նա ներկայանում է «Օրէնագրքով»: Պատվիրատուն Տիխիզեցի Մելիք Մեհրապյան Ավագ խանն է: Հաջորդ ձեռագիրը 10 տարի անց գրված մի ժողովածու է, որի մեջ ամփոփված են ճառեր, ոտանավորներ, մամակներ, աղոթքներ և այլն: Ձեռագիրը գրվել է 1853-54 թթ. Թավրիզում և Սալմաստում:

Եվ վերջին վկայությունը. 1854-55 թթ. պատվիրատու Իսահակ արքեպիսկոպոսի պատվերով գրիչ Եսայի Ավագյանը գրում է «Քարոզգիրք վարդապետաց մերոց» և այդ մասին հիշատակություն թողնում:

Այժմ մի քանի խոսք Թավրիզից Հայաստան ուղարկված ձեռագրերի մասին:

Ատրպատականի թեմակալ առաջնորդ Կարապետ եպիսկոպոսը 1911 թ. էջմիածին է ուղարկում Թավրիզից, Խոյից, Սալմաստից և Մուծամբար գյուղից հավաքված 145 ձեռագիր և երեք հնատիպ գիրք, որոնք միայն 1913 թ. ապրիլին են տեղ հասնում Զուլֆայի մաքսատանը մնալու պատճառով: Այս ձեռագրերը հանձնվում են էջմիածնի մատենադարանապետ Հուսիկ արքեպիսկոպոս Մովսիսյանին: Ըստ Թավրիզում կազմված ցուցակի, այդ ձեռագրերը հավաքվել են.

1. Թավրիզի մասիկին Արամյան գրադարանից
2. Թավրիզի Հայոց առաջնորդարանից

3. Թավրիզի Ս. Աստվածածին եկեղեցուց

4. Թավրիզեցի Ավագ Մելիք-Աբրահամյանից

Տասը տարի անց, 1922 թ. մարտի 13-ին, Ատրպատականի Հայոց առաջնորդարանից Գեորգույն Հոգևոր Խորհրդի անունով էջմիածին է առաքվում 83 ձեռագիր և 17 տպագիր գիրք: Ձեռագրերի հետ միասին ուղարկված ցուցակը, որը կազմված էր Թավրիզում և կնքված առաջնորդարանի կնիքով, բովանդակում է բոլոր 83 ձեռագրերի նկարագրությունը:

Ահա սրանք են Թավրիզից մեզ հասած հայերեն փրկված ձեռագրերը, որոնք փորձել ենք ամբողջացնել հիշատակարանների և ձեռագրացուցակների հիման վրա՝ ներկայացնելով որպես գրչի, ստացողի, ծաղկողի, նորոգողի, ինչպես նաև գրչության գործին նպաստող յուրաքանչյուր անձի երախտիք:

